

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՈՒՂՂՅԱԼ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԻՆ

(8 հուլիս 1986 թ.)

1. Երեկ ես գոհ մնացի ձեր վեկուցումներեն և ձեր արտահայտություններեն: Գնահատեցի մանավանդ ձեր անկեղծությունը և մեր Եկեղեցվո ու ժողովուրդի նկատմամբ ձեր միասնության զգացողությունը: Այդ ոգին կնկատեմ շատ կարևոր, որովհետև այդ ոգիով է միայն, որ մենք պիտի կարողանանք հետզհետե մոտենալ ուղիղ ճանապարհին՝ իրականացնելու համար մեր Եկեղեցվո ներքին միությունը և մեր Աթոռներու գործակցությունը:

Այդ ոգին ես տեսա նաև «Հասկ»-ի վերջին խմբագրականին մեջ, որ կկրեր կնիքը Գարեգին կաթողիկոսի շունչին: Գնահատեցի այն բոլոր արտահայտությունները, որոնք կվերաբերեին Էջմիածնի առաքելության և իմ գործունեության, թեև խմբագրականի երկրորդ մասի վերաբերյալ Մայր Աթոռը ունի լուրջ վերապահումներ:

2. Գալով այսօրվա կացության՝ մեր այս հանդիպումը ես կգտնեմ կարևոր հանգրվան մը մեր Աթոռներու ապագա հարաբերությանց ճանապարհին:

Հետևյալ եզրակացությանց հանգեցա ձեր արտահայտություններեն, իբրև դիրքավորում Կիլիկյան Աթոռի, կանոնագրության վերաբերյալ:

Առաջին՝ Կիլիկյան Աթոռը այժմեական չի նկատեր կանոնագրություն մը մշակելու գործը և ոչ ալ օգտակար:

Եվ երկրորդ՝ Կիլիկյան Աթոռը կշեշտե անհրաժեշտությունը մեր Եկեղեցվո միությունը ամրապնդելու, շոշափելի դարձնելու գործնապես՝ գործակցության ճանապարհով, աստիճանաբար, մեր Աթոռներու և թեմերու հարաբերությանց մակարդակի վրա:

Մոտավորապես այսպես կբանաձևեմ Ձեր տեսակետները:

Այս պահուն իմ խոսքը չեմ կրնար ըսել այս բանաձևումներուն նկատմամբ: Անհրաժեշտ է, որ մեր Գերագույն Հոգևոր Խորհուրդի հետագա մեկ-

երկու նիստերու մեջ մենք քննենք այս հարցերը: Ես կուզեմ կանոնք քննարկել նաև կանոնագրության Հանձնաժողովի անդամներուն հետ, որոնք սեպտեմբերին պիտի գան այստեղ: Որմե հետո Մայր Աթոռը կխորհիմ թե պիտի հանգի վերջնական եզրակացությանց և այդ մասին պիտի կարողանամ ես գրել Տ. Տ. Գարեգին Բ կաթողիկոսին: Այստեղ ես կվերջացնեմ այս առնչությամբ իմ ըսելիքը:

3. Որովհետև իրոք անկեղծ մթնոլորտ մը ստեղծվեցավ մեր կարծիքներու փոխանակության ընթացքին, վերհիշումներ եղան մոտակա անցյալեն, ես հարմար կգտնեմ այս պահը, ակնարկ մը նետելու մեր հարաբերություններու անցյալին: Կկարծեմ, որ այդ օգտակար կըլլա և ինչ-որ չափով լույս կսփռե մեր այսօրվա կացություններուն վրա:

Ես պիտի խոսիմ իմ անձնական փորձառություններու մասին՝ կանգ առնելով երեք պահերու վրա, որոնք վճռական նշանակություն ունեցան մեր Աթոռներու հարաբերություններու ճամբին:

Նախ իմ ներկայությունը Անթիլիաս, 1956-ին: Ես նոր կաթողիկոս էի, ոչ իսկ մեկ տարի անցած էր: Անշուշտ, ծանոթ չէի մեր Եկեղեցվո արտաքսահմանյան ներքին ալեկոծումներուն, կուսակցական պայքարներուն: Հետուն նստած ես ավելի իդեալական պատկերացում ունեի մեր Եկեղեցվո և մեր հոգևորականության նկատմամբ: Այս հոգեվիճակով ես հասա Անթիլիաս: Եվ անկեղծորեն ըսեմ, թե իմ առաջին տպավորությունները երկու կողմերու բուռն բախումներու առջև, շատ ծանր եղան, գրեթե շփոթեցա: Եվ խորապես ցավեցա, որ հայ հոգևորականներ, նույն Աթոռի միաբաններ այնքան թշնամական փոխադարձ հարաբերություններու մեջ կգտնվին: Կուսակցական կոիվներ, պայքարներ, գիտեմ, Ռումանիա ալ կային, երբեմն բավական սուր կերպով արտահայտված, բայց եկեղեցական հարկի տակ, հոգևորականներ այդքան իրար դեմ լարված ըլլան, չէի կրնար ըմբռնել իսկ: Բայց իրողությունը այդ է: Երբ ընդհանուր ժողովը բացվեցավ և իմ խորհուրդը նկատի չառնվեցավ, որ հետաձգվի մեկ շաբաթով դիվանի կազմությունը, ես քաշվեցա ժողովեն, որպեսզի նիստը շարունակվի ոչ իմ ներկայության: Բողոքող պատվիրակները դուրս ելան, կարծեմ Հալեպի ներկայացուցիչները, նաև Էջմիածնի պատվիրակները: Ես շատ մտահոգված էի և կուզեի ճամփա մը, ելք մը գտնել: Եվ փափագ հայտնեցի, որ խոսքի նստիմ աշխարհականներու հետ, որովհետև գիտեի, որ կուսակցական մարդիկ են, որ բուն ղեկավար դերը կկատարեն: Մյուս կողմե որոշ թերթեր «Հուսաբեր»-են սկսյալ մեղադրանքներ կտեղային Ս. Էջմիածնի և իմ հասցեին: «Հուսաբեր» արտառոց խմբագրական մը գրեց «Կրեմլը Անթիլիասում», այսինքն՝ Կրեմլի գործակալները եկած են Անթիլիաս:

Բայց իմ ցանկությունը լսելի դառնալով, օր մը իրիկվան մոտ, Անթիլիաս եկան չորս անձնավորություններ՝ **Հրաչ Փափազյան,** կուսակցական բյուրոյի անդամ, **Մովսես Տեր-Գալուստյան,** կարծեմ նույնպես բյուրոյի անդամ, դոկտ. **Ատուր Գապաքյան,** Լիբանանի շրջանի կուսակցության հերթապահը, չորրորդի անունը մոռցած եմ: Մոտ երեք ժամ տեսակցություն ունեցանք: Նախ ես խոսք առի: Ինչ խոսեցա չեմ հիշեր, բայց սրտով խոսեցա, հուզումով, անկեղծությամբ, համարձակությամբ: Խոսք առին հերթով, նախ Հրաչ Փափազյանը, հետո Մովսես Տեր-Գալուստյանը և Ատուր Գապաքյան: Ամեն մեկը տարբեր կետերու վրա կանգ առին ստեղծված կացության առնչությամբ: Ապա ես կրկին խոսք առնելով վկայեցի, որ նպաստավոր նոր իրավիճակ ստեղծված է Հայաստանի մեջ եկեղեցական տեսակետե, որ եկեղե-

ցաշեն աշխատանքի նոր շրջան մը պիտի սկսի պետական իշխանությանց հույժ բարյացակամ վերաբերմունքով:

Լավատես ոգիով կդիմեի խոսակիցներուս, որպեսզի օգնեն ինծի: Դաշնակցության անցյալին քիչ շատ ծանոթ ըլլալով, չէի կրնար ըմբռնել որ այսպիսի նոր ստեղծված նպաստավոր կացության մը մեջ, իրենք չպիտի հասկնան զիս: Եվ կարծեք հասկցան: Իրապես չորսն ալ ոգևորվեցան հուզումնալի չափով, հատկապես Հրաչ Փափազյանը: Խոստացան երեք օր հետո կրկին ինձ այցելել: Իսկ Հրաչ Փափազյան ըսավ. «Ես նաև առանձին պիտի գամ վաղը, խոսելիքներ ունիմ Ձեզի հետ»: Բայց դիմեցի իրենց ըսելով՝ «Մեկ խնդրանք ունիմ ձեզմե՝ ձեր մամուլը անընդհատ հարձակումներ կգործե իմ դեմ, կխորհիմ թե պետք է դադրի այդ». «Կդադրի»—պատասխանեցին: Ես ավելցուցի, թե՝ «այդքանով չեմ գոհանար, կպասեմ որ «Ազդակ»-ի մեջ լույս տեսնե խմբագրության մեկ հայտարարությունը, ձևով մը հերքելու մինչ այդ լույս տեսած հարձակումները»: Այդ ալ խոստացան: Եվ իրոք, հաջորդ օրը «Ազդակ» առաջին էջի վրա ծանուցումի պես գրությամբ մը ցավ կհայտներ որ «Վազգեն կաթողիկոսի այցելության առիթով ստեղծված թոհուբոհին մեջ թյուրիմացություններ եղան» և այլն, ինչ որ զիս գոհացուց: Կսպասեի որ երեք օր հետո կրկին հանդիպինք: Ես շատ լավատես դարձած էի, բայց երեք օր հետո չեկան: Հրաչ Փափազյանն ալ չեկավ այլևս: Եվ երեք օր հետո նույն «Ազդակ»-ը հարձակումները շարունակեց: Ի՞նչ պատահեցավ, չեմ կրնար գիտնալ, բայց ինչ որ անծանոթ ձեռք մը ամեն ինչ հեղաշրջեց: Չհասկցա թե ի՞նչ կպատահի: Խորեն եպիսկոպոսին կըսեի «սրբական ինչո՞ւ չեն գար»: Ոչ մեկ պատասխան չկրցա ստանալ: Մենք մեկնեցանք և վարագույրը փակվեցավ:

Ահա փորձառություն մը ինծի համար, թե ինչպես պաշտոնական մարդիկ, որոնք անշուշտ սկզբին անկեղծ էին երբ ինծի հետ կխոսեին, հետո սակայն, ինչ-ինչ պատճառներով ստիպվեցան իրենց խոստումները չկատարել:

4. Երկրորդ պահ մը նույնպիսի փորձառության, 1963-ին, երբ ողջագուրումը տեղի ունեցավ: Նույնպես կարևոր, վճռական պահ էր: Դուք գիտեք, թե մինչ այդ ինչքան սրված պայքարի վիճակ կար: Ես ուզեցի օգտագործել իմ Երուսաղեմ այցելությունը, որպեսզի հնարավորություն մը ստեղծվի հանդիպելու Կիլիկյան Աթոռի գահակալի հետ, որուն ես մինչ այդ ճանաչում չէի տված: Ոչ Զարեհ, ոչ Խորեն կաթողիկոսներուն: Ոմանք կարծեցին, թե Երուսաղեմ գալես հետո ինչ-որ կողմնակի ազդեցություններու ներքև ես հրավիրեցի Խորեն կաթողիկոս և անոր կաթողիկասական հանգամանքը հայտարարեցի: Իրականությունը այդպես չէ: Հավանաբար Եղիշե պատրիարքն ալ այս կարծիքը ունեցավ: Իրողությունը այն է սակայն որ ողջագուրումը որոշված էր տակավին Էջմիածնեն ճամբա չելած և այն նամակի բանաձևը, որով Երուսաղեմեն հրավիրեցինք Խորեն կաթողիկոսը, ես գրի առած էի Էջմիածնի մեջ: Եվ ավելցնեմ որ այդ մասին տեղյակ էր նաև մեր պետական իշխանությունը և առարկություն չուներ: Մնացածը գիտեք: Ողջագուրման առթիվ ցնցող ոգևորության պահեր ապրեցանք բոլորս ալ: Շատ ջերմ մթնոլորտ ստեղծվեցավ, ուրախության և լավատեսության: Մենք համաձայնեցանք, առանց պայմաններ դնելու, որուն համար ես մեղադրվեցա ոմանց կողմե: Անոնք կարծեցին որ ես միամտաբար եկա Երուսաղեմ և ծուղակը ինկա, ուրիշներու թելադրանքով: Նույնիսկ հետո նամակներ ստացա Էջմիածին, թե «Ինչ կընեք Վեհափառ, մեր ամբողջ ճակատը քանդեցիք» և այլն: Այո, հա-

մաձայն էի «առանց պայմանի» ողջագուրվելու, բայց բանակցություններով որոշ հարցեր լուծելու, աստիճանաբար տագնապը վերացնելով: Քիչ մը իմ բնավորության երևի հատուկ է՝ երբեմն համարձակ ըլլալ և վիջող բարձրեն նայիլ և չվախնալ վտանգեն:

Ահա այսպես, առանց պայմանի տեսակ մը անձնատուր եղանք: Բայց ես կհավատամ որ այդ օրերուն Կիլիկյան Աթոռի ներկայացուցիչներն ալ անկեղծ էին և ոգևորված: Ապացույց, որ վերադարձեն հետո Խորեն կաթողիկոս երեք-չորս ամիսներու այդ շրջանին, նույն ոգիով արտահայտություններ ունեցավ: Կիպրոսի մեջ նշանավոր ճառ մը խոսեցավ՝ անդրադառնալով ողջագուրումին ճիշտ այն ոգիով, որ իմ ալ ոգին էր՝ սիրո, համերաշխության, գործակցության, որ նոր էջ մը կբացվի մեր պատմության մեջ և այլն: Նույնպիսի ճառ խոսեցավ Բեյրութի մեջ: Հատկապես ոգևորիչ գտա Կիպրոսի խոսածը և շատ ուրախացա որ ուրեմն ես սխալած չէի: Սակայն 1964-ի փետրվարին, այսինքն հինգ ամիս հետո (հոկտեմբերեն մինչև փետրվար) հանկարծ նույն Խորեն կաթողիկոս Voice of America-ին հայտարարություններ ըրավ՝ ըսելով, որ երկու Աթոռները Էջմիածին և Կիլիկյան, **հավասարապոր** են: Առաջին անգամ ըլլալով **հավասարապոր** բառը մեջտեղ ինկավ: Եվ քիչ օրեր անց, անակնկալ կերպով Անթիլիասեն Մարսիլիա ուղարկվեցավ Արտավազդ եպիսկոպոսը, որուն հետևանքով պառակտում ստեղծվեցավ այնտեղ և վեց տարի չարչարվեցան այնտեղի մեր համայնքի մարդիկ, մինչև որ Արտավազդ սրբական վերջիվերջո վերադարձավ իր տունը:

Ահավասիկ ինչպես անսպասելի և անբացատրելի կերպով քանի մը ամսվան մեջ նորեն հեղաշրջում եղավ: Կրկնվեցավ ուրիշ ձևով, այն ինչ պատահեր էր Անթիլիասի մեջ՝ 1956-ին: Նորեն ինչ-որ անծանոթ ուժ շրջեց կացությունը: **Եթե ողջագուրումի ոգին պահպանվեր, մեր եկեղեցական տագնապը շատոնց վերջ գտած կըլլար:**

5. Երրորդ պահ մըն ալ կուզեմ հիշել: 1979-ին, բանակցություններ տեղի ունեցան մեր Աթոռներուն միջև և ներկայացուցիչներ եկան Անթիլիասեն: Բավական երկար բանակցություններե հետո բանակցող կողմերի շինարար և հիմնական եզրակացություններու եկան, հատկապես երկու կետի շուրջ միաձայնությամբ ընդունված՝ **ճանաչումը Էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսին իբրև Ընդհանրական Հայրապետը՝ Գլուխը Հայաստանյայց Եկեղեցվո**, երկրորդ՝ սկզբունքային որոշումը Էջմիածնի թեմերու վերադարձին, որ հետագային երկու կաթողիկոսները պետք է գործնական ճամփաները գտնեին իրականացնելու այդ որոշումը: Անշուշտ մենք գոհ էինք: Քանի մը ամիս հետո սակայն, անսպասելի նամակ մը ստացա Գարեգին կաթողիկոսեն, որով որդեգրված այդ երկու կետերուն նկատմամբ կհայտներ այն տեսակետը, թե «Նոր իրադրությանց ինչ-որ լույսի տակ անոնք վերաքննելի են»: Ուրեմն նորեն ինչ-որ անծանոթ ձեռք մը դեր կատարեց և կացությունը նորեն շրջվեցավ: Այդ նամակին ես պատասխանեցի քիչ մը հուզված, ըսելով, որ եթե մեր Աթոռներու ներկայացուցիչներու միաձայն որոշումները պիտի չհարգվին և հարցերը նորեն պիտի վերաքննվին, այն ատեն ինչ իմաստ ունի որ անոնք կրկին հանդիպին:

Ահավասիկ երրորդ պահ մը, երբ նույն անծանոթին առջև գտնվեցանք: Եվ ամեն ինչ գլխիվայր շրջեցավ:

6. Ավելի առաջ տանելով իմ մտածումները և իմ ներքին մտորումները, մղված եմ հաստատելու թե այս երեք փորձառությունները, ինչպես և այլ փոր-

ձառություններ, հստակորեն ցույց կուտան, թե Էջմիածին-Անթիլիաս տագնապը փաստորեն եկեղեցական չէ, ոչ իսկ եկեղեցական վարչական, այլ քաղաքական է, ավելի ճիշտ կուսակցական, որովհետև կա ծանոթ կուսակցությունը՝ **որ իր ազդեցությունը պարտադրած է Կիլիկյան Աթոռին, Եկեղեցվո կազմակերպության միջոցով իր տիրապետությունը տարածելու սփյուռքի հայության վրա: Այս ստույգ իրողություն է:**

7. Ինչպես անցյալները անձնական խոսակցության մեջ կարտահայտվեի, կհիշեի, թե 1960-ին, երբ Նյու-Յորք էի, նույն կուսակցության, այսինքն դաշնակցության գերագույն մարմնի անդամ դոկտոր Խաթանեսյան, եկավ հյուրանոց, մայիսի 7-ին: Հայտնի էր որ կուգար հատուկ առաքելությամբ: Դոկտոր Խաթանեսյան եկավ ինծի բացատրելու, որ այս բաժանյալ վիճակը ուղիղ ճանապարհ է, ուղիղ է, որ **Էջմիածինը Սովետական Հայաստանի հայության համար պահվի, իսկ Անթիլիասը սփյուռքի հայության համար:** Փորձեց ինձ համոզել, որ այս սկզբունքը ճիշտ է և ազգային տեսակետով ալ օգտակար: Անշուշտ ես ալ փորձեցի կինք համոզել, որ մեծ սխալ մը կգործվի իր կուսակցության կողմե, թե եկեղեցական, թե ազգային տեսակետե:

Բաժնվեցանք առանց որևէ եզրակացության հանգելու:

Եվ անցան ութ տարիներ: 1968-ին, երբ նորեն Հյուսիսային Ամերիկա էի, այս անգամ Բոստոնի մեջ, դոկտոր Խաթանեսյան, այն ատեն «Հայրենիք»-ի խմբագիր, իրիկուն մը ինձ մոտ եկավ հյուրանոց, ըսելու համար՝ «Վեհափառ, եկել եմ Ձեզ հայտնելու, թե մեր կուսակցությունը այս հարցում սխալվեց»: «Նկատում եմ որ վտանգավոր ճանապարհի վրա է Անթիլիաս, որ նոր երարխիա է կազմում և դա ապագայի համար վտանգավոր է ազգային տեսակետից»: Ես լսեցի և ժպիտով ըսի. «Լավ դոկտոր, եթե դուք այդպես կըսեք, ես ըսելիք չունիմ այլևս: Կմնա որ դուք, ձեր կուսակցությունը այդ սխալը սրբագրե»: «Այո,—պատասխանեց,—ուրիշ համախոհներ ալ ունիմ, այդ սխալը պետք է փորձենք սրբագրել»: Այդպես բաժնվեցանք:

8. Հստակ է, որ դժբախտաբար մեր եկեղեցական տագնապը կապված է կուսակցության ընդհանուր դիրքորոշման հետ, ներկա Հայաստանի նկատմամբ: Հայտնի է բոլորիս Դաշնակցության կարգախոսը՝ «Անկախ Հայաստան եռագույն դրոշակով»: Ահա մեր եկեղեցական տագնապի բուն, իրական պատճառը: Անշուշտ, Մայր Աթոռը չի խորհիր Դաշնակցության հանդեպ վերաբերմունք ճշտել անոր քաղաքական դիրքորոշումներու կամ քարոզչության համար: Սակայն Մայր Աթոռը պարտավոր է վերաբերմունք ճշտել Դաշնակցության այս դիրքորոշման դեմ այն պատճառով, որ տվյալ կուսակցությունը իր այդ դիրքորոշումը պարտադրած է Կիլիկյան Աթոռին և իր քաղաքական նպատակները կփորձե կենսագործել մեր Եկեղեցվո մարմնի մեկ մասը իր ձեռքին մեջ առած, մեր Եկեղեցին պառակտելով սփյուռքի մեջ: Կարծեմ Մայր Աթոռը իբրև գերագույն իշխանությունը հայ Եկեղեցվո և պատասխանատուն պատմության առջև, իրավունքը ունի և պարտավոր է սպասելու, որ Կիլիկյան Աթոռը ձերբազատվի կուսակցական դիրքավորումներե և վերադառնա հայ Եկեղեցվո մայր կառուցվածքի մեջ՝ շարունակելու իր հոգևոր և կրթական և ազգային-մշակութային առաքելությունը կանոնական հաղորդակցության և գործակցության մեջ Մայր Աթոռի հետ՝ իր Աթոռի բոլոր իրավասություններով, ինչպես որ այդ օրինական դրությունը գոյություն ուներ մինչև 1956 թվականը և որևէ տագնապալի վիճակ գոյություն չուներ մեր Աթոռներուն միջև:

Հետևաբար, մեր կամքեն անկախ «Եռագույնով Անկախ Հայաստան» կարգախոսը, կառնչվի մեր եկեղեցական կյանքին հետ՝ արգելակելով Կիլիկյան Աթոռի ապատ հարաբերությունները Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ:

Քանի մը խոսք ևս:

«Եռագույն դրոշակով անկախ Հայաստան» անշուշտ կենթադրե արդի Հայաստանի անջատումը Սովետական Միության ապգային Հանրապետություններու միութենեն: Պարզ է: Հարց տանք, Ապրիլյան մեծ Եղեռնի ահավոր փորձառութենեն հետո և արդի աշխարհի իրավիճակներու լույսի տակ, նաև երբեք չմոռնալով մեր փոքրիկ երկրի աշխարհագրական դիրքը և մեր ապգի սեփական ուժերու տարողությունը, արդյոք ըղձալի՞ է արդի մեր ծաղկյալ երկիրը անջատել մեր մեծագույն պաշտպանեն և թողնել կայն մինակ և անպաշտպան գիշատիչ գայլերուն բերանը: **Ես կաթողիկոս Ամենայն Հայոց պատասխան կպատեմ այս հարցումին:** Այս հարցը կուսակցական կամ գաղափարախոսական հարց չէ, այլ մեր ապգին և հայրենիքին համար լինել-չլինելու հարց է, մեր Եկեղեցվո և մեր Ս. Էջմիածնի լինել-չլինելու հարց է: Կարևորությամբ կհիշեմ, թե քանի մը տարի առաջ կուսակցության պատասխանատու մեկ անձնավորությունը կհայտարարեր ինձ ոչ պաշտոնական հանդիպումի մը առթիվ՝ «Հ. Յ. Դաշնակցության միակ գերագույն նպատակն է, գոնե մի պատառ հող վերցնել, շատը գիտենք որ հնարավոր չէ, մի պատառ հող վերցնել Թուրքիայից և միացնել այն արդի Հայաստանին»: Եթե այդպես է, ուրեմն մեր դիրքորոշումը ուղիղ է և արդար: Այո, մեր հաստատ համոզումն է որ մեր ապգի շահերու և մեր Եկեղեցվո շահերու լույսի տակ, մենք հեռատես պետք է ըլլանք և գիտնանք օգտվիլ քաղաքական այն բարենպաստ պայմաններեն, որոնք ընծայվեցան Հայաստանին 1920 նոյեմբերեն սկսյալ, որով վերջ գտան դարավոր տառապանքները և ողբերգությունները հայոց ապգին և գրեթե ոչնչեն կապմվեցավ ու վարգացավ մեր արդի վերածնած շեն հայրենիքը, իբրև մեկ անդամը Սովետական Հանրապետություններու Միության, ապահով և խաղաղ, անվտանգ պայմաններու մեջ՝ ապատորեն ծաղկեցնելով իր ապգային մշակույթը, դպրությունը, ընկերային-տնտեսական կյանքը: Մեր մտահոգությանց, մեր գործելակերպի առանցքը կարծեմ պետք է ըլլա հայ հայրենիքի և Ս. Էջմիածնի ապագա ճակատագիրը: Եվ ահա թե ինչու մեր եղբայրական հրավերն է, որ Կիլիկյան Աթոռը այս գիտակցությամբ ղեկավարվի և կանոնական հաղորդակցության և իրավ գործակցության մեջ մտնե Մայր Աթոռի հետ: Թող լուսավորվի, այո, **Անթիլիասի մեր եղբայրներուն կյանքին և գործին մեջ մեր Եկեղեցվո և ապգի ճակատագրի միասնության գիտակցությունը:**

10. Վերադառնալով իմ հիմնական այս մտահոգության, ըսեմ, ես չեմ հավատար, որ հայ ժողովուրդը այստեղ իր հայրենի հողի վրա կրնա ապրիլ խաղաղ և ապահով, առանց ռուս ապգի պաշտպանության: Ավելի քան այժմեական է Խաչատուր Աբովյանի կտակը, մանավանդ 1915-ի ցեղասպան Եղեռնեն հետո: **Եթե Սովետական Միության Հանրապետություններու մեջ կա Հանրապետություն մը, որ առավելագույն չափով շահագրգռված է չբաժնվելու Սովետական Միութենեն, այդ մեր հայկական Հանրապետությունն է, այսօր, վաղը և հավանաբար միշտ:**

Այս է իմ կարծիքով գերագույն ճշմարտությունը այսօր համայն հայ ապգի համար: Այլ ապգեր ուրիշ ճշմարտություններ ունին, իրենց ճշմարտությունները, համաձայն իրենց աշխարհագրական և քաղաքական պայմանավորումներուն: **Մերը այս է սակայն:** Մեր բոլոր դատումները և ձեռնարկումները

անհրաժեշտորեն պայմանավորված պետք է ըլլան այս «մեր ճշմարտության» հետ, մեր բոլոր դատումները և դիրքորոշումները պետք է կատարվին աշխարհի իրադարձությունները տեսնելով, կանգնած աներեր մեր հայրենի հողի վրա, մեր մայր ժողովուրդի գերագույն շահերուն պատվանդանի վրա: Եթե սփյուռքի հայության հերոսական ճիգերը չծառայեն այս «մեր ճշմարտության» ամրապնդման, կարծեմ անոր բոլոր երապանքները և ձեռնարկները պիտի մնան ինչ-որ չափով օդին մեջ կախված, առանց իրապես ապգաշեն իրագործումներու, պիտի մնան գուցե հայոց պատմության ծիրեն դուրս: **Եվ ափսոս է, որ հայ սփյուռքը անպտուղ մնա Հայաստանի համար:** Հայրենաբնակ մեր ժողովուրդը շատ բան կսպասե նաև սփյուռքեն: Հայաստանի կողքին կանգնած՝ հայրենի մշակութային և շինարարական իրագործումներով ոգեշնչված հայ սփյուռքը, այսպիսով պիտի դառնա առավել ինքնավստահ, առավել լավատես, առավել հաստատ իր ինքնությունը պահպանելու վճռականությամբ:

Սփյուռքի հայությունը հայ ժողովուրդի և հայրենիքի ներկային և ապագային կրնա նպաստել այն չափով, ինչ չափով որ ան կարողանա նպաստել ազգի Հայաստանի հառաջդիմության ու զորացման: Հայ սփյուռքը անշուշտ ինքնանպատակ չէ:

11. Սիրեցյալ պատվիրակներ Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի, վերջացնելով իմ խոսքը՝ ձեզի կմաղթեմ բարի վերադարձ Անթիլիաս, և կխնդրեմ, որ իմ եղբայրական սիրո ողջույնը տանիք Աթոռիդ գահակալ Նորին Սրբություն Տ. Տ. Գարեգին Բ կաթողիկոսին և թարգմանը հանդիսանաք իմ ամենաբարի մաղթանքներուն, նաև իմ խոհերուն և մտահոգություններուն մեր սուրբ Եկեղեցվո և մեր հարազատ ժողովուրդի և մեր Մայր Հայաստանի ներկայի և ապագայի ճակատագրի նկատմամբ: Տարեք մանավանդ իմ եղբայրական կոչը և առաջադրանքը, որ մոտ ապագային Կիլիկյան Աթոռը մնա Ամենայն Հայոց Ս. Էջմիածնի և մեր մայր հայրենիքի կողքին, մեր մայր Եկեղեցվո կանոնական միության և գործակցության մեջ աներեր: